Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի -ի N Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանը:

2. Միջոցառման շահառու հանդիսանում են այն տնտեսավարողները (բացառությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետեր, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություններ, ներդրումային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչներ և այլ նմանատիպ գործունեություն ծավալողները), որոնք 01.01.2020 թվականից մինչև 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-ից մինչև 50 վարձու աշխատակից և նշված ընկերությունների վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել նշված ժամանակահատվածում:

3. Սույն միջոցառման շահառուներին տրամադրվում է միանվագ դրամաշնորհ:

4. Միանվագ դրամաշնորհի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԱՉ=(ԱՀ:ԱՔ)*(ԱՔ:5)

որտեղ՝

ԱՉ – պետության կողմից տրամադրվող **աջակցության չափն է**

ԱՀ – կազմակերպության բոլոր աշխատողների **աշխատավարձերի հանրագումարն է**

ԱՔ – կազմակերպության **աշխատողների քանակն է**

Ընդ որում (ԱՔ:5) բանաձևը կլորացվում է դեպի ներքև:

5. Սույն հավելվածի 5-րդ կետում նշված բանաձևը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) մինչև 5 աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար մեկ ամսվա աշխատավարձի ֆոնդը բաժանվում է աշխատակիցների թվին,

2) 5 և ավել աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար՝

ա) հաշվարկվում է ընկերության ամսական միջին աշխատավարձի չափը, այսինքն՝ մեկ ամսվա աշխատավարձի ֆոնդը բաժանած աշխատակիցների թվին,

բ) հաշվարկվում է աշխատակիցների ընդհանուր թվի մեկ հինգերորդ մասը, այսինքն՝ աշխատակիցների ընդհանուր թիվը բաժանվում է 5-ի՝ կլորացումով դեպի ներքև,

գ) հաշվարկվում է սույն ենթակետի ա) և բ) պարբերությունների արդյունքների արտադրյալը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կորոնավիրուսի հետևանքների հակազդման միջոցառումների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Կորոնավիրուսի համաճարակի տարածմանը հակազդելու, դրա հետագա տարածումը կանխարգելելու հրամայականով պայմանավորված ՀՀ կառավարությունը 2020թ. մարտի 16-ին ընդունեց որոշում Հայաստանի Հայաստանում 30 օր ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ: Որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունում մեկ ամսով՝ մինչև 2020թ. ապրիլի 16-ը կիրառվել են մի շարք սահմանափակումներ, այդ թվում՝ արտակարգ դրության պարետի ցուցումով:

Կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանում ևս սահմանափակվել կամ որոշ դեպքերում ամբողջովին դադարեցվել է մի շարք տնտեսավարողների գործունեությունը, ինչը հանգեցրել է բացասական հետևանքների բազմաթիվ տնտեսավարողների մոտ: Հաշվի առնելով կորոնավիրուսի տարածման հետևանքով տնտեսավարողների մոտ գոյացած դժվարությունները և նպատակ ունենալով օժանդակել վերջիններիս գործունեության շարունակականությունը արդյունավետ աշխատատեղերի պահպանման միջոցով՝ ՀՀ կառավարությունը մշակել է այս ծրագիրը:

2. <u>Առաջարկվող կարգավորման բնույթը</u>

Ներկայացնող նախագծով առաջարկվում է ընդունել աջակցության ծրագիր, որն ուղղված է լինելու այն տնտեսավարողներին (բացառությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետեր, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություններ, ներդրումային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչներ և այլ նմանատիպ գործունեություն ծավալողները), որոնք 01.01.2020 թվականից մինչև 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-ից մինչև 50 վարձու աշխատակից և նշված ընկերությունների վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել նշված ժամանակահատվածում:

Աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվելու է միանվագ դրամաշնորհ:

3. <u>Ակնկալվող արդյունքը</u>

Ներկայացված իրավական ակտի նախագծի ընդունման արդյունքում կտրամադրվի մեկանգամյա աջակցություն առանձին տնտեսավարողներին արդյունավետ աշխատատեղերի պահպանության նպատակով: